ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«_____» _____2026թ. **N___ -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 184-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 463-Ն որոշման հավելվածի 3-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի վարչական տարածքում պետական և համայնքային բյուջեների միջոցներով և այլ աղբյուրների հաշվին կառուցված ջրամատակարարման, ջրահեռացման և հեղեղատար համակարգերը (այսուհետև գույք) նվիրել Հայաստանի Հանրապետությանը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2026 թվականի _____-ի
N _____Ա որոշման

Ց Ա Ն Կ

Երևան քաղաքի վարչական տարածքում պետական և համայնքային բյուջեների միջոցներով և այլ աղբյուրների հաշվին կառուցված, Հայաստանի Հանրապետությանը նվիրատվությամբ հանձնվող ջրամատակարարման, ջրահեռացման և հեղեղատար համակարգերի գույքի

Հ/Հ	Վարչական շրջանի անվանումը	Օբյեկտի անվանումը և հասցեն	Երկարությունը (գծմ)	Կառուցման պատվիրատուն	Ֆինանսավորման ծավալը (Շինարարություն, տեխ. հսկողություն, հեղինակային հսկողություն) ՀՀ դրամ
1	2	3	4	5	6
1	Արաբկիր վարչական շրջան	Հրազդանի կիրճում (հեղեղատար)	4500 գծմ	Երևանի քաղաքապետարան	

2	Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան	Մոնթե Մելքոնյան փողոց (հեղեղատար)	2600 գծմ	Երևանի քաղաքապետարան («ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ)	
3	Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան	Մոնթե Մելքոնյան փողոց (կոյուղագիծ)	2600 գծմ	Երևանի քաղաքապետարան («ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ)	
4	Շենգավիթ վարչական շրջան	Շիրակի փողոց (հեղեղատար)	1600 գծմ	Երևանի քաղաքապետարան («ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ)	
5	Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան	Կ. Ուլնեցի-Ռուբինյանց նորակառույց ճանապարհ (հեղեղատար)	2300 գծմ	Երևանի քաղաքապետարան («ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ)	
6	Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան	Կ. Ուլնեցի-Ռուբինյանց նորակառույց ճանապարհ (կոյուղագիծ)	2300 գծմ	Երևանի քաղաքապետարան («ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ)	
7	Արաբկիր վարչական շրջան	Բաղրամյան 3-րդ նրբանցք (կոյուղագիծ)	212 գծմ	Երևանի քաղաքապետարան	Շ. 19 046 225 Տ. 250 000 Հ. 313 220 **ԸՆԴ. 19 609 445**

8	Կենտրոն վարչական շրջան	Էջմիածնի խճուղի (Նորագյուղի կենտրոնի ձախակողմյան հատված) (կոյուղագիծ)	110 գծմ	Երևանի քաղաքապետարան	Շ. 6 300 000 Տ. 80 000 Հ. 37 040 **ԸՆԴ. 6 417 040**
9	Շենգավիթ վարչական շրջան	Նորագավիթի 13-րդ և 14-րդ փողոցներ (կոյուղագիծ)	968 գծմ	Երևանի քաղաքապետարան	Շ. 72 898 656 Տ. 560 000 Հ. 744 800 **ԸՆԴ. 74 203 456**
10	Դավթաշեն վարչական շրջան	Դավթաշենի 4-րդ փողոց (կոյուղագիծ)	345 գծմ	Երևանի քաղաքապետարան	Շ. 37 808 220 Տ. 500 000 Հ. 147 390 **ԸՆԴ. 38 455 610**
11	Շենգավիթ վարչական շրջան	Ներքի Չարբախ 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ և 16-րդ փողոցներ (կոյուղագիծ)	6000 գծմ	Երևանի քաղաքապետարան (Վարչական շրջանի ծրագրերով)	**ԸՆԴ. 204 805 766**
12	Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան	Հաղթանակ թաղամաս (կոյուղագիծ)	1100 գծմ	Կառուցվել է Երևանի քաղաքապետարանի Շինարարության և բարեկարգման վարչության ծրագրերով	
13	Աջափնյակ վարչական շրջան	Փիրումյան թաղամաս (կոյուղագիծ)	480 գծմ	Կառուցվել է Երևանի քաղաքապետարանի Շինարարության և բարեկարգման	

				վարչության ծրագրերով	
14	Դավթաշեն վարչական շրջան	Ս. Գևորգյան փողոց (կոյուղագիծ)	370 գծմ	Կառուցվել է Երևանի քաղաքապետարանի Շինարարության և բարեկարգման վարչության ծրագրերով	
15	Ավան վարչական շրջան	Դուրյան թաղամաս h.35/1 (Հ.54 մանկապարտեզ) (կոյուղագիծ)	350 գծմ	Երևանի քաղաքապետարան	Շ. 10 326 288 Տ. 270 000 Հ. 81 600 **ԸՆԴ. 10 677 888**
16	Արաբկիր վարչական շրջան	Հր. Քոչարի 1-ին նրբանցք (կոյուղագիծ)	215 գծմ	Երևանի քաղաքապետարան	Շ. 8 558 616 Տ. 40 000 Հ. 60 880 **ԸՆԴ. 8 659 496**
17	Էրեբունի վարչական շրջան	Դավիթ Բեկ փողոց (կոյուղագիծ)	650 գծմ	Երևանի քաղաքապետարան Շինարարության և բարեկարգման վարչության ծրագրերով	
18	Էրեբունի վարչական շրջան	Նոր Արեշի 22-րդ փողոց (հեղեղատար)	570 գծմ	Երևանի քաղաքապետարան	Շ. 49 687 191 Տ. 315 000 Հ. 346 330 **ԸՆԴ. 50 348 521**

19	Նոր Նորք վարչական շրջան	Բաղյան, Գյուրջյան, Քոչարյան փողոցներ (հեղեղատար)	590 գծմ	Երևանի քաղաքապետարան	Շ. 58 581 702 Տ. 140 000 Հ. 487 510 **ԸՆԴ. 59 209 212**
20	Նորք-Մարաշ վարչական շրջան	Նոր Նորքից դեպի Նորքի 1-ին նրբանք կապուղի (կոյուղագիծ)	520 գծմ	Երևանի քաղաքապետարան	Շ. 44 517 908 Տ. 840 000 Հ. 294 430 **ԸՆԴ. 45 652 338**
21	Էրեբունի վարչական շրջան	Ավանեսովի 3-րդ նրբանցք (հեղեղատար)	350 գծմ	Երևանի քաղաքապետարան	Շ. 24 781 039 Տ. 420 000 Հ. 192 440 **ԸՆԴ. 25 393 479**
22	Էրեբունի վարչական շրջան	Նոր Արեշի 33-րդ փողոց (կոյուղագիծ)	240 գծմ	Երևանի քաղաքապետարան	Շ. 14 370 256 Տ. 140 000 Հ. 135 370 **ԸՆԴ. 14 645 626**
23	Շենգավիթ վարչական շրջան	Արշակունյաց պողոտա – Նոր Շիրակ – Արտաշատի խճուղի ճանապարհահատված	1. Ջրահեռացման պլաստիկ խողովակ d=0.5մ – 5710 մ 2. Ջրահեռացման պլաստիկ խողովակ d=0.3մ – 1882 մ 3. Պլաստիկ խողովակ d=0.4մ (խմելու ջրի խողովակ) – 1313 մ 4. Պողպատե խողովակ Փ=426x6մմ (խմելու ջրի խողովակ) – 278 մ 5. Արշակունյաց պողոտայի պլաստիկ կոյուղատար D=300մմ – 1263 մ	Երևանի քաղաքապետարան («ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ)	

			6. Պողպատե խողովակ(խմելու ջրի խողովակ) Փ=530x8մմ – 1548 մ 7. Պողպատե խողովակներ (խմելու ջրի խողովակ) Փ=108x4,5մմ – 101 մ 8. Պողպատե խողովակներ (խմելու ջրի խողովակ) Փ=219x6մմ (Նորագավիթ 1-ին փողոց) – 159 մ 9. Պլաստիկ խողովակաշար Փ300մմ (կոյուղատար համակարգ մեծ օվալի հարակից տարածքում) – 545 մ		
24	Դավթաշեն վարչական շրջան	Դավթաշեն – Աշտարակ ճանապարհահատված	1. Ջրահեռացման պլաստիկ խողովակ d=0.5մ – 2611 մ 2. Ջրահեռացման պլաստիկ խողովակ d=0.3մ – 4016 մ 3. Կոյուղու գոֆրեաձև խողովակաշար Փ300/338մմ – 132 մ 4. Կոյուղու Երկաթբետոնյա խողովակաշար Փ1000մմ – 333 մ 5. Կոյուղու գոֆրեաձև խողովակաշար Փ300/338մմ – 278 մ 6. Կոյուղու գոֆրեաձև խողովակաշար Փ500/572մմ – 1309 մ	Երևանի քաղաքապետարան («ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ)	

			7. Պողպատե խմելու ջրի խողովակներ Փ=630x9մմ – 124 մ 8. Պողպատե խմելու ջրի խողովակ Փ=273x6մմ – 632 մ		
25	Մալաթիա-Սեբաստի և Աջափնյակ վարչական շրջաններ	Բաբաջանյան – Աշտարակ ճանապարհահատված (Տիչինա – Գ.Չաուշի փողոցների միջանկյալ հատված հատված՝ ներառյալ Բաբաջանյան-Իսակով հանգույցի մակերևութային ջրահեռացման պոմպակայանը)	1. Ջրահեռացման պլաստիկ գոֆրեաձև խողովակաշար 500մմ – 1097մ 2. Ջրահեռացման պլաստիկ գոֆրեաձև խողովակաշար 800մմ – 3318մ 3. Ջրահեռացման պլաստիկ գոֆրեաձև խողովակաշար 300մմ – 4346մ 4. Խմելու ջրի մատակարարման պլաստիկ խողովակ 426մմ – 90մ 5. Խմելու ջրի մատակարարման պլաստիկ խողովակ 110մմ – 198մ 6. Խմելու ջրի մատակարարման մետաղական խողովակ 1200մմ – 100մ 7. Խմելու ջրի մատակարարման մետաղական խողովակ 1000մմ – 617մ 8. Կոյուղու պլաստիկ խողովակաշար 200մմ – 103մ 9. Կոյուղու պլաստիկ խողովակաշար 315մմ – 1043մ	Երևանի քաղաքապետարան («ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ)	**ԸՆԴ. 4,219,848,710**

			10. Կոյուղու պլաստիկ խողովակաշար 500մմ – 1580մ 11. Կոյուղու ե/բ խողովակաշար 1000մմ – 60մ 12. Կոյուղու պլաստիկ խողովակաշար 800մմ – 40մ 13. Բաբաջանյան-Իսակով հանգույցի մակերևութային ջրահեռացման պոմպակայան		
26	Արաբկիր վարչական շրջան	Մամիկոնյանց և Արամ Խաչատրյան փողոցները միացնող ճանապարհահատված (հեղեղատար)	1. Խողովակներ դիտահորերի միջև - 95 **գծ.մ** d=300մմ պոլիէթիլենային ծավալավոր: 2. Խողովակներ անձևընդունիչներից դեպի դիտահորեր - 64 **գծ.մ** d=250մմ պոլիէթիլենային ծավալավոր:	Երևանի քաղաքապետարան («ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ)	**ԸՆԴ. 6,496,780**
27	Արաբկիր վարչական շրջան	Կոմիտասի պողոտա հ.1 հասցեին հարակից (հեղեղատար)	240 գծմ	Երևանի քաղաքապետարան	Շ. 36 202 002 Տ. 100 000 Հ. 326 060 **ԸՆԴ. 36 628 062**

28	Աջափնյակ վարչական շրջան	Լուկաշինի 1-ին, 2-րդ, 3-րդ փողոցները (կոյուղագիծ)	3000 գծմ	«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին վարձակալությամբ շահագործման հանձնված ցանկից դուրս է մնացել (Երկու հատված կառուցվել է Երևանի քաղաքապետարանի ծրագրերով)	
29	Էրեբունի վարչական շրջան	Մուշական թաղամաս (կոյուղագիծ)	4600 գծմ	Կառուցվել է Երևանի քաղաքապետարանի Շինարարության և բարեկարգման վարչության ծրագրերով	**ԸՆԴ.249 501 100.2**
30	Նուբարաշեն վարչական շրջան	Նոր Զմյուռնիայի փողոց (հեղեղատար)	175 գծմ	Երևանի քաղաքապետարան (Վարչական շրջանի ծրագրերով)	**ԸՆԴ.**6 000 000
31	Նուբարաշեն վարչական շրջան	Նուբարաշենի 15-րդ փողոցում (կոյուղագիծ)	92 գծմ	Երևանի քաղաքապետարան (Վարչական շրջանի ծրագրերով)	**ԸՆԴ.**6 771 000

32	Նուբարաշեն վարչական շրջան	Նոր Զմյուռնիայի փողոց (կոյուղագիծ)	100 գծմ	Երևանի քաղաքապետարան (Վարչական շրջանի ծրագրերով)	**ԸՆԴ.**7 626 000
33	Նուբարաշեն վարչական շրջան	Նուբարաշենի 11-րդ փողոցի 15-րդ շենքի բակ (կոյուղագիծ)	70մ գծմ	Երևանի քաղաքապետարան (Վարչական շրջանի ծրագրերով)	**ԸՆԴ.**6 675 000
34	Նուբարաշեն վարչական շրջան	Նուբարաշենի 11-րդ փողոցի 20 շենքին հարակից (կոյուղագիծ)	162մ գծմ	Երևանի քաղաքապետարան (Վարչական շրջանի ծրագրերով)	**ԸՆԴ.**10 422 000
35	Արաբկիր վարչական շրջան	Ղափանցյան փողոցի վերջնամաս (կոյուղագիծ)	932 գծմ	Երևանի քաղաքապետարան	Շ. 69 000 000 Տ. 350 000 Հ. 454 857 **ԸՆԴ. 69 804 857**
36	Էրեբունի վարչական շրջան	Նոր Արեշի 34-րդ փողոց (հեղեղատար)	404 գծմ	Երևանի քաղաքապետարան	Շ. 35 640 000 Տ. 40 000 Հ. 298 750 **ԸՆԴ. 35 978 750**
37	Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան	Հաղթանակ թաղամաս 13-րդ փողոց (կոյուղագիծ)	395 գծմ	Երևանի քաղաքապետարան	Շ. 20 388 000 Տ. 40 000 Հ. 179 720 **ԸՆԴ. 20 607 720**

38	Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան	Հաղթանակ թաղամաս 1-ին փողոցի հ.28 տնից մինչև Հաղթանակ թաղամաս 1-ին փողոցի 3-րդ նրբանցք (կոյուղագիծ)	360 գծմ	Երևանի քաղաքապետարան	Շ. 32 310 000 Տ. 70 000 Հ. 284 810 **ԸՆԴ. 32 664 810**
39	Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան	Հաղթանակ թաղամաս 1-ին փողոցի հ.49/2-ից մինչև հ.64/1 հասցե (կոյուղագիծ)	1272 գծմ	Երևանի քաղաքապետարան	Շ. 30 996 000 Տ. 400 000 Հ. 241 952 **ԸՆԴ. 31 637 952**
40	Շենգավիթ վարչական շրջան	Ներքին Շենգավիթ 6-րդ փողոցի վերջնամասից դեպի Արշակունյաց պողոտա (կոյուղագիծ)	1016 գծմ	Երևանի քաղաքապետարան	Շ. 78 480 000 Տ. 400 000 Հ. 521 727 **ԸՆԴ. 79 401 727**
41	Շենգավիթ վարչական շրջան	Նորագավիթ 13-րդ փողոց (կոյուղագիծ)	936 գծմ	Երևանի քաղաքապետարան	Շ. 100 008 000 Տ. 430 000 Հ. 678 687 **ԸՆԴ. 101 116 687**
42	Շենգավիթ վարչական շրջան	Շիրակի փողոց հ.45 (կոյուղագիծ)	788 գծմ	Երևանի քաղաքապետարան	Շ. 97 320 000 Տ. 570 000 Հ. 924 350 **ԸՆԴ. 98 814 350**
43	Ավան վարչական շրջան	Ավանի 4-րդ փողոցի (կոյուղագիծ)	205 գծմ (կոյուղագիծ)	Երևանի քաղաքապետարան	Շ. 38 100 000 Տ. 145 000 Հ. 420 400 **ԸՆԴ.38 665 400**

44	Ավան վարչական շրջան	Ավանի 4-րդ փողոցի (հեղեղատար)	125 գծմ (հեղեղատար)		
45	Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան	Շահումյան 4-րդ փողոց 1-ին նրբանցքի վերջնամաս (կոյուղագիծ)	390 գծմ	Երևանի քաղաքապետարան	Շ. 29 844 000 Տ. 78 000 Հ. 275 496 **ԸՆԴ. 32 677 496**
46	Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան	Վեգների փողոց (Շահումյան 13-րդ)՝ Մելիքյան փողոցից Օհանովի փողոցով մինչև Անդրանիկ-Օհանով փողոցների խաչմերուկ / (կոյուղագիծ)	1016 գծմ	Երևանի քաղաքապետարան	Շ. 79 980 000 Տ. 250 000 Հ. 778 410 **ԸՆԴ. 81 008 410**
47	Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան	Միքայելյան փողոց հ.2-ից հ.28 հասցե (կոյուղագիծ)	422 գծմ	Երևանի քաղաքապետարան	Շ. 34 777 000 Տ. 216 000 Հ. 358 810 **ԸՆԴ. 35 344 810**
48	Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան	Մալաթիա փողոց հ.68 տնից մինչև Սվաճյան փողոց Ա-3 թաղամասի հ.27 շենք կոյուղագիծ	610 գծմ	Երևանի քաղաքապետարան	Շ. 40 080 000 Տ. 194 000 Հ. 379 140 **ԸՆԴ. 40 653 140**
49	Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան	Շահումյան 14-րդ փողոց (կոյուղագիծ)	285 գծմ	Երևանի քաղաքապետարան	Շ. 18 240 000 Տ. 134 000 Հ. 186 560 **ԸՆԴ. 18 560 560**

50	Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան	Հաղթանակ թաղամասի 2-րդ փողոց (կոյուղագիծ)	338 գծմ	Երևանի քաղաքապետարան	Շ. 29 274 000 Տ. 224 000 Հ. 404 480 **ԸՆԴ. 29 902 480**
51	Նոր Նորք վարչական շրջան	Մոլդովական փողոց հ.29/1 շենքից մինչև Դ. Մալյան փողոց (կոյուղագիծ)	370 գծմ	Երևանի քաղաքապետարան	Շ. 30 264 000 Տ. 182 000 Հ. 306 820 **ԸՆԴ. 30 752 820**

Խմելու ջրագիծ՝ 5160 գծմ
Կոյուղագիծ՝ 39948 գծմ
Հեղեղատար՝ 36822 գծմ»:

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԳՈՒՅՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պետական սեփականություն հանդիսացող խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման գույքի պահպանումը, սպասարկումը և վերանորոգումն իրականացվում է մրցութային կարգով ընտրված, շահագործող կազմակերպության՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից, որի հետ իրավահարաբերությունները կարգավորվում են 2016 թվականի նոյեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի ու «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության միջև կնքված գույքի վարձակալության պայմանագրի դրույթներին համապատասխան:

Վերջին տարիներին Երևան քաղաքի վարչական տարածքում Երևանի քաղաքապետարանի կողմից համայնքային և պետության կողմից պատվիրակված մի շարք ծրագրերով կառուցվել են ջրամատակարարման, ջրահեռացման և հեղեղատար համակարգեր, որոնք նախագծային փուլում, ինչպես նաև շինարարական աշխատանքների ավարտից հետո (ավարտական շահագործման ակտ) համաձայնեցվել են «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից:

Չնայած այն հանգամանքին, որ Երևանի քաղաքապետարանի ծրագրերով կառուցված համակարգերը չեն հանձնվել ՀՀ ՏԿԵՆ Ջրային Կոմիտեին, դրանք շահագործվում և սպասարկվում են «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից: Միաժամանակ կառուցված նոր համակարգերից վերջինիս կողմից բազմաթիվ դեպքերում քաղաքացիներին տրամադրվում են ջրամատակարարման և/կամ ջրահեռացման նոր միացումների տեխնիկական պայմաններ:

Գույքի հանձնման և դրա հետագա տնօրինման և հաշվառման, ինչպես նաև ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման բարելավման նպատակով անհրաժեշտություն է առաջացել գույքը որպես նվիրատվություն հանձնել Հայաստանի Հանրապետությանը և վարձակալության փոխանցել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին, քանի որ խմելու ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող կազմակերպությանն է իրավունք տրվում օրենքով սահմանված կարգով խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման, կեղտաջրերի մաքրման ծառայություններ մատուցել բաժանորդներին, իրականացնել ջրի մանրածախ վաճառք, ինչպես նաև իր սպասարկման տարածքում տիրապետել, շահագործել, պահպանել, բարելավել և ընդլայնել իր ջրային համակարգը: Գույքի հետ կապված խնդիրների կարգավորման և պատշաճ սպասարկում իրականացնելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել սույն Նախագծի ընդունումը:

Նախագծի ընդունումը հնարավորություն կտա ՀՀ ՏԿԵՆ Ջրային Կոմիտեին և «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը կազմակերպելու պետական գույքի համալրումը և հաշվառումը, ինչպես նաև ջրամատակարարման համակարգերի հուսալի

և անվտանգ շահագործումն ու Հայաստանի Հանրապետության խմելու ջրի որակի ստանդարտներին համապատասխան ջրի մատակարարման ապահովումը:

Նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ